# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-19/08

ք. Երևան «04» 09 2019թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Մարգարիտա Պողոսյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Խաս-Խազ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Հ. Խասխազյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կենցաղային տնտեսական ապրանքների մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատակարարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատակարարվող ապրանքի որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատակարարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ապրանք.

ա) Չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանք պայմանագրին համապատասխանող ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետները:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարված ապրանքի արդյունքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված՝ ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Վաճառողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 884,320 (ութ հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը

կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում

է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները

հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղարի
ժամանակավոր պաշտոնակատար՝

---------------------------------- Մ. Պողոսյան
/ստորագրություն/

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Խաս-Խազ» ՍՊԸ
Գործունեության հասցե՝
ք. Երևան, Թումանյան 15
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022103621001
ՀՎՀՀ 01546394

Տնօրեն՝

---------------------------------- Հ. Խաչախազյան
/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 1*
*«04» 09 2019 թ. կնքված*
*«ՊԿԾ-ՄԱԱՊՁԲ-19/08» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ապրանք | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավոր ապրանքի գինը | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 39811300/2 | հոտազերծիչ, օդի | հատ | 550 | 15 400 | 28 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 2 | 39812410/2 | կահույքի փայլեցման միջոց | հատ | 760 | 9 120 | 12 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 3 | 39812600/2 | մաքրող մածուկներ և փոշիներ | հատ | 250 | 10000 | 40 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 4 | 39812600/3 | մաքրող մածուկներ և փոշիներ | հատ | 500 | 5000 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 5 | 39831241/3 | օճառ, ձեռքի | կգ | 2530 | 5 060 | 2 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 6 | 39831245/2 | օճառ, հեղուկ | լիտր | 575 | 28 750 | 50 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 7 | 39831100/1 | լվացող նյութեր (աման լվանալու) | լիտր | 600 | 3000 | 5 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 8 | 39831273/3 | հատակի մաքրման նյութեր | լիտր | 2350 | 28200 | 12 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 9 | 39831276/2 | զուգարանների մաքրման նյութեր | լիտր | 980 | 14 700 | 15 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 10 | 39831280/3 | ապակի մաքրելու միջոց | լիտր | 900 | 13 500 | 15 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 11 | 39831283/3 | հատակի լվացման լաթ | հատ | 500 | 7 000 | 14 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 12 | 39831283/5 | հատակի լվացման լաթ | հատ | 1350 | 10 800 | 8 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 13 | 39831283/8 | հատակի լվացման լաթ | հատ | 570 | 4560 | 8 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 14 | 39522330/3 | մաքրող կտորներ | հատ | 550 | 6 600 | 12 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 15 | 39522330/4 | մաքրող կտորներ | հատ | 380 | 7 600 | 20 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 16 | 39522330/5 | մաքրող կտորներ | հատ | 490 | 19600 | 40 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 17 | 39835000/4 | հատակ (առաստաղ) մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա | հատ | 2150 | 8600 | 4 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 18 | 39837000/1 | ցախավել | հատ | 3750 | 15 000 | 4 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 19 | 39836000/2 | ավել, սովորական | հատ | 1150 | 9200 | 8 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | 39839200/1 | գոգաթիակ, աղբը հավաքելու համար, հասարակ | հատ | 340 | 2 040 | 6 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 21 | 39221480/3 | զուգարանի խոզանակներ | հատ | 700 | 7 000 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 22 | 44411741/1 | զուգարանակոնքի լողան | հատ | 3000 | 18000 | 6 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 23 | 39224331/2 | դույլ պլաստմասե | հատ | 1100 | 5 500 | 5 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 24 | 39224344/1 | աղբարկղ՝ թիթեղյա | հատ | 950 | 13 300 | 14 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 25 | 33761000/1 | զուգարանի թուղթ, ռուլոնով | հատ | 800 | 8 000 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 26 | 33761000/3 | զուգարանի թուղթ, ռուլոնով | հատ | 187.5 | 24 000 | 128 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 27 | 33761000/6 | զուգարանի թուղթ, ռուլոնով | հատ | 165 | 115500 | 700,0 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 28 | 33761300/4 | ձեռքի թղթե սրբիչներ | հատ | 600 | 240 000 | 400 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 29 | 39513200/2 | թղթե անձեռոցիկ, երկշերտ | հատ | 320 | 16 000 | 50 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 30 | 39513200/3 | թղթե անձեռոցիկ, երկշերտ | հատ | 210 | 12 600 | 60 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 31 | 39531700/3 | ուղեգորգեր | քմ | 5400 | 5 400 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 32 | 39531700/4 | ուղեգորգեր | քմ | 4800 | 15840 | 3,3 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 33 | 19641000/3 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | հատ | 500 | 10 000 | 20 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 34 | 19641000/4 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | հատ | 230 | 23 000 | 100 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 35 | 24911300/2 | սոսինձ՝ հեղուկ | կգ | 1300 | 3 900 | 3 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 36 | 24911500/2 | սոսինձ (ալրոգոլ) | հատ | 1200 | 4 800 | 4 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 37 | 24911700/3 | սոսինձ՝ սուպեր-502 | կգ | 18000 | 1800 | 0.1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 38 | 44423600/1 | կպչուն ժապավեններ | հատ | 650 | 3250 | 5 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 39 | 44423600/2 | կպչուն ժապավեններ | հատ | 400 | 4000 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 40 | 44423600/3 | կպչուն ժապավեններ | հատ | 450 | 4500 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 41 | 44511270/2 | մուրճեր | հատ | 2800 | 2 800 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 42 | 44511190/1 | կացիններ | հատ | 4500 | 4 500 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 43 | 44511110/5 | բահեր | հատ | 2100 | 2100 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 44 | 39541130/1 | լարեր (խոտհնձիչ մեքենայի) | մետր | 37 | 5550 | 150 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 45 | 18811100/2 | անջրանցիկ կոշիկ | զույգ | 3000 | 3000 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 46 | 42131170/4 | ջրային հոսքերի կարգավորման փականներ | հատ | 2100 | 21 000 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | 42131170/5 | ջրային հոսքերի կարգավորման փականներ | հատ | 1900 | 19 000 | 10 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 48 | 44511370/1 | գործիքների հավաքածու | հատ | 24500 | 24 500 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 49 | 4192200/3 | գամեր | կգ | 1 050 | 1 050 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 50 | 4192200/4 | գամեր | կգ | 700 | 700 | 1 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 51 | 31442000/2 | մարտկոց, AA տեսակի | հատ | 150 | 15 000 | 100 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |
| 52 | 31441000/4 | մարտկոց, AAA տեսակի | հատ | 250 | 25 000 | 100 | Ք. Երևան, Մաշտոց 47 | օգոստոս |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253
Գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝

--------------- Մ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Խաս-Խազ» ՍՊԸ
Գործունեության հասցե՝
ք. Երևան, Թումանյան 15
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022103621001
ՀՎՀՀ 01546394

Տնօրեն՝

--------------- Հ. Խասխազյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 04 » 09 2019թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-19/08»ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39811300/2 | հոտազերծիչ, օդի | | | | | | | | | 15,4 | 15,4 | 15,4 | 15,4 | 15,4 |
| 2 | 39812410/2 | կահույքի փայլեցման միջոց | | | | | | | | | 9, 12 | 9, 12 | 9, 12 | 9, 12 | 9, 12 |
| 3 | 39812600/2 | մաքրող մածուկներ և փոշիներ | | | | | | | | | 10,00 | 10,00 | 10,00 | 10,00 | 10,00 |
| 4 | 39812600/3 | մաքրող մածուկներ և փոշիներ | | | | | | | | | 5,00 | 5,00 | 5,00 | 5,00 | 5,00 |
| 5 | 39831241/3 | օճառ, ձեռքի | | | | | | | | | 5,06 | 5,06 | 5,06 | 5,06 | 5,06 |
| 6 | 39831245/2 | օճառ, հեղուկ | | | | | | | | | 28,75 | 28,75 | 28,75 | 28,75 | 28,75 |
| 7 | 39831100/1 | լվացող նյութեր (աման լվանալու) | | | | | | | | | 3,00 | 3,00 | 3,00 | 3,00 | 3,00 |
| 8 | 39831273/3 | հատակի մաքրման նյութեր | | | | | | | | | 28,20 | 28,20 | 28,20 | 28,20 | 28,20 |
| 9 | 39831276/2 | զուգարանների մաքրման նյութեր | | | | | | | | | 14,7 | 14,7 | 14,7 | 14,7 | 14,7 |
| 10 | 39831280/3 | ապակի մաքրելու միջոց | | | | | | | | | 13,50 | 13,50 | 13,50 | 13,50 | 13,50 |
| 11 | 39831283/3 | հատակի լվացման լաթ | | | | | | | | | 7,00 | 7,00 | 7,00 | 7,00 | 7,00 |
| 12 | 39831283/5 | հատակի լվացման լաթ | | | | | | | | | 10,80 | 10,80 | 10,80 | 10,80 | 10,80 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 39831283/8 | հատակի լվացման լաթ | | | | | | | | | 4,56 | 4,56 | 4,56 | 4,56 | 4,56 |
| 14 | 39522330/3 | մաքրող կտորներ | | | | | | | | | 6,60 | 6,60 | 6,60 | 6,60 | 6,60 |
| 15 | 39522330/4 | մաքրող կտորներ | | | | | | | | | 7,60 | 7,60 | 7,60 | 7,60 | 7,60 |
| 16 | 39522330/5 | մաքրող կտորներ | | | | | | | | | 19,60 | 19,60 | 19,60 | 19,60 | 19,60 |
| 17 | 39835000/4 | հատակ (առաստաղ) մաքրելու ձող. պլաստմասե, փայտյա | | | | | | | | | 8,60 | 8,60 | 8,60 | 8,60 | 8,60 |
| 18 | 39837000/1 | ցախավել | | | | | | | | | 15,00 | 15,00 | 15,00 | 15,00 | 15,00 |
| 19 | 39836000/2 | ավել, սովորական | | | | | | | | | 9,20 | 9,20 | 9,20 | 9,20 | 9,20 |
| 20 | 39839200/1 | գոգաթիակ, աղբը հավաքելու համար, հասարակ | | | | | | | | | 2,04 | 2,04 | 2,04 | 2,04 | 2,04 |
| 21 | 39221480/3 | զուգարանի խոզանակներ | | | | | | | | | 7,00 | 7,00 | 7,00 | 7,00 | 7,00 |
| 22 | 44411741/1 | զուգարանակոնքի լողան | | | | | | | | | 18,00 | 18,00 | 18,00 | 18,00 | 18,00 |
| 23 | 39224331/2 | դույլ պլաստմասե | | | | | | | | | 5,50 | 5,50 | 5,50 | 5,50 | 5,50 |
| 24 | 39224344/1 | աղբարկղ՝ թիթեղյա | | | | | | | | | 13,30 | 13,30 | 13,30 | 13,30 | 13,30 |
| 25 | 33761000/1 | զուգարանի թուղթ, ռուլոնով | | | | | | | | | 8,00 | 8,00 | 8,00 | 8,00 | 8,00 |
| 26 | 33761000/3 | զուգարանի թուղթ, ռուլոնով | | | | | | | | | 24,00 | 24,00 | 24,00 | 24,00 | 24,00 |
| 27 | 33761000/6 | զուգարանի թուղթ, ռուլոնով | | | | | | | | | 115,50 | 115,50 | 115,50 | 115,50 | 115,50 |
| 28 | 33761300/4 | ձեռքի թղթե սրբիչներ | | | | | | | | | 240, 00 | 240, 00 | 240, 00 | 240, 00 | 240, 00 |
| 29 | 39513200/2 | թղթե անձեռոցիկ, երկշերտ | | | | | | | | | 16,00 | 16,00 | 16,00 | 16,00 | 16,00 |
| 30 | 39513200/3 | թղթե անձեռոցիկ, երկշերտ | | | | | | | | | 12,60 | 12,60 | 12,60 | 12,60 | 12,60 |
| 31 | 39531700/3 | ուղեգորգեր | | | | | | | | | 5,40 | 5,40 | 5,40 | 5,40 | 5,40 |
| 32 | 39531700/4 | ուղեգորգեր | | | | | | | | | 15,84 | 15,84 | 15,84 | 15,84 | 15,84 |
| 33 | 19641000/3 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | | | | | | | | | 10,00 | 10,00 | 10,00 | 10,00 | 10,00 |
| 34 | 19641000/4 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | | | | | | | | | 23,00 | 23,00 | 23,00 | 23,00 | 23,00 |
| 35 | 24911300/2 | սոսինձ՝ հեղուկ | | | | | | | | | 3,90 | 3,90 | 3,90 | 3,90 | 3,90 |
| 36 | 24911500/2 | սոսինձ (աէրոզոլ) | | | | | | | | | 4,80 | 4,80 | 4,80 | 4,80 | 4,80 |
| 37 | 24911700/3 | սոսինձ՝ սուպեր-502 | | | | | | | | | 1,80 | 1,80 | 1,80 | 1,80 | 1,80 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 44423600/1 | կպչուն ժապավեններ | | | | | | | | | 3,25 | 3,25 | 3,25 | 3,25 | 3,25 |
| 39 | 44423600/2 | կպչուն ժապավեններ | | | | | | | | | 4,00 | 4,00 | 4,00 | 4,00 | 4,00 |
| 40 | 44423600/3 | կպչուն ժապավեններ | | | | | | | | | 4,50 | 4,50 | 4,50 | 4,50 | 4,50 |
| 41 | 44511270/2 | մուրճեր | | | | | | | | | 2,80 | 2,80 | 2,80 | 2,80 | 2,80 |
| 42 | 44511190/1 | կացիններ | | | | | | | | | 4,50 | 4,50 | 4,50 | 4,50 | 4,50 |
| 43 | 44511110/5 | բահեր | | | | | | | | | 2,10 | 2,10 | 2,10 | 2,10 | 2,10 |
| 44 | 39541130/1 | լարեր (խոտհնձիչ մեքենայի) | | | | | | | | | 5,55 | 5,55 | 5,55 | 5,55 | 5,55 |
| 45 | 18811100/2 | անջրանցիկ կոշիկ | | | | | | | | | 3,00 | 3,00 | 3,00 | 3,00 | 3,00 |
| 46 | 42131170/4 | ջրային հոսքերի կարգավորման փականներ | | | | | | | | | 21,00 | 21,00 | 21,00 | 21,00 | 21,00 |
| 47 | 42131170/5 | ջրային հոսքերի կարգավորման փականներ | | | | | | | | | 19,000 | 19,000 | 19,000 | 19,000 | 19,000 |
| 48 | 44511370/1 | գործիքների հավաքածու | | | | | | | | | 24,50 | 24,50 | 24,50 | 24,50 | 24,50 |
| 49 | 4192200/3 | գամեր | | | | | | | | | 1,05 | 1,05 | 1,05 | 1,05 | 1,05 |
| 50 | 4192200/4 | գամեր | | | | | | | | | 0.7 | 0.7 | 0.7 | 0.7 | 0.7 |
| 51 | 31442000/2 | մարտկոց, AA տեսակի | | | | | | | | | 15,00 | 15,00 | 15,00 | 15,00 | 15,00 |
| 52 | 31441000/4 | մարտկոց, AAA տեսակի | | | | | | | | | 25,00 | 25,00 | 25,00 | 25,00 | 25,00 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝

________________ Ա. Պողոսյան
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Խաս-Խազ» ՍՊԸ
Գործունեության հասցե՝
ք. Երևան, Թումանյան 15
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022103621001
ՀՎՀՀ 01546394

Տնօրեն՝

________________ Հ. Խասախազան
/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված 3*
*«      »             2019թ. կնքված*
*«**ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-19/08**» ծածկագրով պայմանագրի*

**Պայմանագրի կողմ**
«Խաս-Խազ» ՍՊԸ
Գործունեության հասցե՝
ք. Երևան, Թումանյան 15
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022103621001
ՀՎՀՀ 01546394

**Պատվիրատու**
Հայաստանի Հանրապետության պետական
վերակսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
ֆինների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «            » 2019թ.*

Պայմանագրի անվանումը՝ Պետական վերահսկողական ծառայության կարիքների համար կենցաղային տնտեսական ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «      » «            » 2019թ.
Պայմանագրի համարը՝ «ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-19/08»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   »   «          » 2019թ. դուրս գրված N __________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| | Մատակարարվող ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| 1. | | | | | | | | |
| ... | | | | | | | | |
| 2. | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 04 » 09 2019թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և «Խաս-Խազ» ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. ________________ -ին կնքված N «ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-19/07» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ. ________ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | դրամ | 1 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն